

գաւառներուն մէջ: Սակայն, այժմ որոշ չէ թէ ո՞րքան կ'արտադրէ: Մետաքսի աշխատանոցները մեծապէս տուժեցին, երբ Մեծն Պետրոս զրաւեց Գիւլանը, պատճառ ըլլալով բազմաթիւ Պարսիկ զեղջուկներու իրենց բնակարաններուն եւ մետաքսի շերամներուն լքման: Այս վնասէն Գիւլան զեռ չէ վերագտած ինքզինքը: Կ'ըսուի թէ Գիւլանի մետաքսին տարեկան վճարած տուրքը, անցեալ տարիներուն, միայն 5000 փութ է (35 Անգլ. փառունտ) եղած է: Մինչդեռ յայտնի է, որ այս գաւառը պէտք է, որ շատ աւելի մեծ քանակութեամբ արտադրէր ամէն տարի: Կ'ըսեն թէ ասիկա Շահին ուշադրութիւնը զրաւած է եւ առիթ տուած իրեն այս տարի իրեն վերապահելու մետաքսը: Այդ աւելի անմիջական նպատակ ունի որոշակի գիտնալու թէ՛ գաւառը իրապէս որքա՞ն մետաքս կ'արտադրէ, քան թէ այդ ապրանքը մենաշնորհ ընելով զինք բարձրացնելու: Որովհետեւ, ըստ տրուած վերելի հաշուին, Գիւլանի գաւառը իր արտադրած մետաքսի կէսին համար իսկ տուրք չէր տար ցարդ, եւ եթէ միւս գաւառներն ալ այսպէս վերաբերին, այն ատեն Շահը զրկուած կ'ըլլայ մետաքսի իր տուրքի կէսէն աւելիէն: Ոչ մէկ ապրանք մետաքսին պէս բարձր տուրք կը վճարէ, կամ այնքան զրամ կը բերէ Շահին գանձին:

«Լաւագոյն եւ ամենամօտ քննութեանց վրայ, որ կրցանք ընել (որովհետեւ մեր յիշածին հետեւելով կարելի չէ որեւէ ապահովութիւն ունենալ մաքսատան տոմարներուն վրայ) Գիւլան այժմ 12,000 փութէն աւելի չ'արտադրեր տարեկան: Ասոր կէսը Պարսկաստանի մէջ կը սպառուի, եւ մնացեալը թուրքիոյ եւ Ռուսիոյ միջեւ Եւրոպական հրապարակները կը տարուի: Ուրիշներ կ'ըսեն, որ Գիւլան 15,000-էն աւելի փութ մետաքս կ'արտադրէ: Սակայն, մենք կը նախընտրենք աւելի չափաւորը ընդունիլ, թէեւ որոշ է, որ մետաքսի գործարանները կը շարունակեն մեծապէս բարելաւել»: 1)

Ասկէ վերջ կը տրուին մետաքսի առեւտու-

րին մենաշնորհ ըլլալուն մանրամասնութիւնները: Մենաշնորհը կը հաստատուի 1739-ին՝ արդեւիք ըլլալով առեւտուրի ազատութեան: Ներածման հետ մետաքսի արտածումն ալ կը կաշկաղուի, թէեւ ոչ առանց բնիկ առեւտրականներուն բողոքին: Ասով, սակայն, գոհացում կը գտնան մասամբ: Մեր Անգլիացին կը յուսայ, որ այս վատ քայլը երկար չպիտի տեւէ եւ Շահը բոլորովին պիտի վերցընէ մենաշնորհը: Ան կը վկայէր որ իրենց ստացած պայմանագրին առաւելութեանց նըման առաւելութիւններ Հայ վաճառականներն ալ ձեռք կը բերեն:

Ինչ որ, սակայն, ուղղակի առնչութիւն ունի նիւթիս հետ էլթընի մետաքսի արտադրութեան մասին տուած ծանօթութիւններն են:

«Գիւլանի մետաքսը, — կը շարունակէ ան — այս անցեալ երկու կամ երեք տարիներուն ընթացքին շատ աւելի սուղ եղած է քան նախապէս: Պատճառը Գանձակի եւ Շամախի քաղաքներուն մետաքսի արտադրութեանց անկումն է: Առաջինը՝ թեթեւ մը ժանտախտէ հարուածուելէն եւ երկրորդը (Շամախը) Լէզգի թաթարներէն ու Նատիր Շահէն: Թաթարները, նախ, կողոպտեցին եւ կործանեցին քաղաքը, եւ Շահը, հին Շամախը աւերելով, ըստիպեց բնակչութիւնը նոր քաղաք մը կառուցանել, հինին աւերակներէն քանի մը վերստ հետու: Սակայն, որովհետեւ Պարսիկ զիւղացիները հիւսիսային գաւառներու մեծ շահ կը գտնեն շերամարուծութեան մէջ եւ ատրիկա կ'ընեն իրենց գլխաւոր զբաղումը, ուրեմն, տարակուսելու չէ, որ այս երկիրները շուտով յաղթեն այն վնասներուն, ինչպէս որ Գանձակ արդէն ըրած է, ուր մետաքս կայ այժմ շատ առատորէն եւ աժան գիներով: Այդ քաղաքը երկու տարի է, որ ազատ է ժանտախտէ: Իսկ զալով վաճառականներու անձի եւ ինչքի ապահովութեան, անոնք միշտ ենթակայ են իշխաններու կարգադրութեանց, սակայն հոս ոչ աւելի քան Եւրոպայի որեւէ մասին մէջ»: 2)

1) Անդ էջ 28-29:

2) Անդ էջ 43: